

ԲՐԲԵՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՇՐՋԱՆԻ ՈՐԱԿՅԱԼ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍ



Ի՞նչ է ԲՐԲԵՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՈՐԱԿՅԱԼ ՈՒՍՈՒՑՉՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԸ:

ԲԴՄՇ-ի կրթական գրասենյակը քվեարկությամբ որոշել է 2020 թվականի մարտի 3-ի ընտրությունների ընթացքում հողատարածքի պարտատուն դնել Բրբենքի բնակիչների քվեարկության համար:

ԻՆՉՈՒ՞ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐԵԼ:

Նահանգային և դաշնային ֆինանսավորումը բավարար դրամ չի հատկացնում բարձրորակ կրթությունը պահպանելու համար: ԲԴՄՇ-ն ավելի քիչ ֆինանսավորում է ստանում հարակից շրջանների համեմատությամբ:

Հողատարածքի հարկը տեղական հսկողությամբ ղեկավարվող դրամ է, որը միայն Բրբենքի դպրոցների և աշակերտների համար է:

Ի՞նչ ԿԱՐԺԵՆԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՐԿԸ:

\$0.10 ցենտ բնակելի տարածքի յուրաքանչյուր 1 քառակուսի ոտնաչափի դիմաց: Օրինակ \$1,700 քառակուսի ոտնաչափ ունեցող տունը կվճարի տարեկան \$170 դոլար, կամ մոտավորապես ամսական \$14 դոլար:

Ո՞վ ՊԵՏՔ Է ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐԻ:

Հողատարածքի հարկը պետք է վճարեն բնակելի և առևտրական սեփականատերերը (բացառելով ոչ-շահութաբեր կազմակերպությունները): Ահա թե ինչպես է \$9 միլիոն դոլարը գանձվելու.
 Առևտրական սեփականություն – մոտավորապես 48%
 Բնակելի տարածքի սեփականատերեր-մոտավորապես 35%
 Բնակելի շենքի սեփականատերեր – մոտավորապես 17%

Ո՞Վ Է ԲԱՑԱՌՎՈՒՄ ԱՅՍ ՀԱՐԿԸ ՎՃԱՐԵԼՈՒՑ:

Հողատարածքի տեր, 65 տարեկան և ավելի տարիք ունեցողները, ովքեր բնակվում են այդ հողատարածքի վրա, կարող են դիմել և ազատվել այս հարկը վճարելուց:

Ո՞Վ Է ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԴՐԱՄԸ ՃԻՇՏ ԾԱԽՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Այն կհսկվի անկախ վերահսկման և համայնքի անդամներից կազմված կոմիտեի կողմից:

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ԾԱԽՍՎԵԼՈՒ ԴՐԱՄԸ:

Այն հաստատվելուց հետո, ապագա 12 տարիների ընթացքում, Բրբենքի դպրոցները տարեկան կստանան մոտավորապես 9 միլիոն դոլար: ԲԴՄՇ-ն կօգտագործի դրամը հետևյալի համար.
 Ներգրավել և պահպանել որակյալ ուսուցիչներ և աշխատակիցներ (42-47%)
 Պահպանել դասարաններում աշակերտների ցածր թիվ (2-7%)
 Պահպանել և ընդլայնել մասնագիտական և համալսարանական, արվեստի, երաժշտության, գիտություն դասընթացները և նորարարական ծրագրերը (38-43%)
 Պահպանել և ընդլայնել անվտանգության և բանկեցության աջակցությունը (9-13%)

Ի՞նչ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ՊԱՐՏԱՏՈՄՍԸ ՉՀԱՍՏԱՏՎԻ:

Հնարավոր կրճատումներ, որոնք արդեն արվել են 3.5 միլիոն դոլարից բացի, կընդգրկի նաև հետևյալը.

- Ուսուցիչներ (դասարաններում կավելանան աշակերտների թիվը)
- Մասնագիտական տեխնիկական կրթության դասընթացներ
- Տարրական դպրոցի երաժշտության դասեր
- Միջանկյալ և միջնակարգ դպրոցների արվեստի դասեր
- Շնորհալի և տաղանդավոր կրթության (GATE) ծրագիր
- Տարրական դպրոցի ֆիզկուլտուրայի ծրագիր
- Միջանկյալ դպրոցի իսպաներեն դասընթացներ
- Տեխնոլոգիայի աջակցություն

ՈՒ՞Մ ՀԵՏ ԿԱՊՆՎԵԼ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

Կապնվել ԲԴՄՇ-ի գերատեսուչ Մաթ Հիլլի հետ matchill@burbankusd.org կամ զանգահարելով (818) 729-4422